ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 Կոդ 04704111 Հասցե Արմավիրի մարզ գյուղ Արտիմետ Հեռ. 4 - 76 - 01

N 62

05 օգոստոսի 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2011 թվականի հուլիս ամսին ընդունվել է համայնքի ղեկավարի երկու որոշում , իսկ կարգադրություն չի արձակվել :

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտք թիվ 4791-11
«09» 08 2011թ.

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----5-------

«----06----» հուլիսի 2011 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Աթարբեկյանի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.07.1991թ. նիստի որոշման՝ գյուղխորհրդին պատկանող սղոցարանը սեփականաշնորհվել է նույն գյուղի բնակիչ Սեդրակ Սիմոնի Մարգարյանին, որի համար վերջինս 15.07.1991թ. վճարել է սղոցարանի հաշվեկշռի 1511 ռ. մնացորդային արժեքը:

Այժմ Սեդրակ Սիմոնի Մարգարյանը դիմել է Արտիմետի գյուղապետարան /նախկին Աթարբեկյան / վերը նշված անշարժ գույքի զբաղեցրած հողամասի նկատմամբ իրավունքի վերականգնման խնդրանքով:

Փաստացի չափագրումների արդյունքում պարզվել է , որ սղոցարանի շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը կազմում է 0,113 հա, որը չի ընդգրկվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 207 , 564 և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Արմավիրի մարզի Արտիմետ գյուղի բնակիչ Սեդրակ Սիմոնի Մարգարյանին պատկանող Արտիմետի սղոցարանի՝ շենք շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0,113 հա մակերեսով հողմասի նկատմամբ իրավունքը վերականգնել համաձայն իրավիճակային հատակագծի:
2. Սղոցարանին տրամադրել Չարենցի 84 հասցե:
3. Սեդրակ Սիմոնի Մարգարյանը հողամասի նկատմամբ ձեռք է բերում վարձակալության իրավունք, որի նկատմամբ ենթակա է սեփականության իրավունքի գրանցումը համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----6-------

«---20-----» հուլիսի 2011 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի ապրիլի 06-ի թիվ 01/ 12 / 1045 – 11 գրությունը , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 3 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի « Համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 3 Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.
   1) Որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում « Իրավունքներ և պարտակա-նություններ» բաժինը լրացնել նոր կետերով, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Միրզախանյան

2011 թվականի հուլիսի 20
գ. Արտիմետ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետի
գյուղական համայնքի ղեկավարի
2011 թվականի հուլիսի 20 – ի
թիվ 6 -Ա որոշման

ԼՐԱՑՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18 –Ի
ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

1. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արտիմետի գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը, կազմում է համապատասխան եզրակացությունները և ներկայացնում է համայնքի ղեկավարին:

2. Սահմանված կարգով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատանքներին առնչվող , փաստաթղթաշրջանառությունը, համապատասխան գրանցամատյանների վարումը և դրանց պահպանումը: